Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-762-11.11.2009-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության (28 դեկտեմբերի 1998 թվականի ՀՕ-270) օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետեւյալ խմբագրությամբ նոր պարբերություններով.

«Հայաստանի Հանրապետություն ներմուծված և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների (բացառությամբ՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704 եւ 8705 ծածկագրերին դասվող ավտոմեքենաների) համար վճարը հաշվարկում է ներմուծողը՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքների իրացման շրջանառությունից և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող ապրանքների համար օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափից: Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված վճարը պակասեցվում է իրացված ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարների չափով՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքին համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված վճարի գումարից: Հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված վճարից չպակասեցված վճարները վճարողի առաջիկա վճարումների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա չեն:

Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործվել են Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ, ապա սույն հոդվածին համապատասխան հաշվարկված բնապահպանական վճարի գումարը պակասեցվում է՝

1) իրացված ապրանքի արտադրությունում օգտագործված Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված եւ պետական բյուջե վճարված բնապահպանական վճարների չափով, բայց ոչ ավելի, քան իրացված ապրանքի համար սույն հոդվածին համապատասխան հաշվարկված բնապահպանական վճարի գումարից,
2) իրացված ապրանքի արտադրությունում օգտագործված Հայաստանի Հանրապետություն մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված եւ մատակարարներին վճարված բնապահպանական վճարների չափով, բայց ոչ ավելի քան իրացված ապրանքի համար սույն հոդվածին համապատասխան հաշվարկված բնապահպանական վճարի գումարից:

Հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված վճարից չպակասեցված՝ իրացված ապրանքի արտադրությունում օգտագործված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարները վճարողի առաջիկա վճարումների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա չեն:

Սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական վճարների գումարները հաշվարկային փաստաթղթերում առանձնացնում են միայն շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնողները և արտադրող իրացնողները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կցվում է

«ՀՀ բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
ՀՀ կառավարություն	օրենքի նախագիծ	Նախագիծը խմբագրել՝ նախատեսելով, որ ՀՀ-ում արտադրվող և իրացվող միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարից պակասեցվի /հաշվանցվի/ նաև ՀՀ-ում արտադրված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մատակարարներին վճարված բնապահպանական վճարները: Հակառակ դեպքում անհավասար պայմաններ կստեղծվեն շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող և արտադրվող ապրանքների համար բնապահպանական վճարների հաշվարկման մասով և կխրախուսվի շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների /որպես հումք/ ներմուծումը:	ընդունված է
ՀՀ կառավարություն	1-ին հոդված	«խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի պահանջները:	ընդունված է